ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԵՎ ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. **Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.**

<u>Դատապարտյալին առանձին պահելու վերաբերյալ կարգավորումները.</u>

Հաշվի առնելով ազատությունից զրկված անձանց իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությունը՝ նրանց առանձին պահելու վերաբերյալ կարգավորումները պետք է շարադրված լինեն հնարավորինս մանրամասն՝ սահմանելով առանձին պահելու կոնկրետ հիմքեր, որոշման կայացման պահանջ, դրա կայացման կարգ և այլն: Այս համատեքստում հարկ է նշել, որ ԽԿԿ 21-րդ ընդհանուր զեկույցում, որը նվիրված է ազատությունից զրկված անձանց առանձին պահելուն, հստակ առանձնացված են ազատությունից զրկված անձանց առանձին պահելու տարատեսակները, մասնավորապես, ի թիվս այլնի, կարգավորված են պաշտպանական նպատակներով և կանխարգելիչ նպատակներով առանձին պահելու ռեժիմները:[1]

Մինչդեռ ՀՀ քրեակատարողական օրենսգրքում անձին առանձին (մեկուսի) պահելու հստակ կառուցակարգեր առկա չեն, իսկ առկա կարգավորումները թերի են, , ինչը անհրաժեշտ է վերանայել՝ հիմք ընդունելով առկա միջազգային չափանիշները:

Անդրադառնալով առանձին պահելու՝ որպես տույժի միջոցի կիրառմանը, հարկ է նշել, որ ԽԿԿ 24-րդ ընդհանուր զեկույցում շեշտվում է, որ անչափահասներին մեկուսացնելու ցանկացած ձև միջոց է, որը կարող է վտանգել նրանց ֆիզիկական և/կամ մտավոր բարեկեցությունը, և այդ պատճառով այն պետք է կիրառվի միայն որպես վերջին միջոց (last resort): ԽԿԿ-ի կարծիքով՝ առանձին պահելը որպես կարգապահական տույժի տեսակ պետք է միայն կիրառվի շատ կարճ ժամանակահատվածներով և ոչ մի դեպքում չպետք է գերազանցի 3 օրը: Ցանկացած դեպքում, երբ անչափահասների նկատմամբ նման միջոց է կիրառվում, նրանք պետք է ապահովվեն սոցիալ-կրթական աջակցությամբ և պատշաճ մարդկային շփումով:[2]

Վերոգրյալի համատեքստում՝ հարկ է նշել նաև, որ հաշվի առնելով անչափահասի հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները՝ նրան պատժախուց տեղափոխելը շատ հաճախ կարող է ունենալ հակառակ ազդեցությունը՝ այդպիսով արգելք հանդիսանալով վերականգնողական աշխատանքների իրականացման և նրա վերասոցիալականացմանն ուղղված քայլերի արդյունավետ իրականացման համար, մինչդեռ վերջիններս պետք է առաջնային լինեն նրա պատժի կրման գործընթացում:

Այս տեսանկյունից կարևորելով ազատությունից զրկված անչափահասների հետ վերականգնողական աշխատանքների իրականացման առաջնահերթությունը, ինչպես նաև հիմք ընդունելով նրանց վրա պատժախուց տեղափոխելու բացասական ազդեցությունը ու այդ մոտեցման կապակցությամբ միջազգայնորեն առկա բացասական վերաբերմունքը՝ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքում և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքում՝ արգելելով անչափահասին պատժախուց տեղափոխելը:

<u>Ազատությունից զրկված անձանց հոգեկան առողջության պահպանման ապահովումը.</u>

---

[1] Տե՛ս https://rm.coe.int/1680696a88 (11.02.2022):

[2] Տե՛ս https://rm.coe.int/1680696a9c (11.02.2022):

Ազատությունից զրկված անձանց բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրման հարաբերությունները կարգավորող ակտերի վերլուծությունը վկայում է, որ չնայած ՀՀ կառավարության կողմից իրականացվող հիմնական քաղաքականությունը ուղղված է բանտային առողջապահության համակարգը հանրային առողջապահության համակարգին ինտեգրելուն՝ նշված հարաբերությունները կարգավորող ակտերում առողջության պահպանման իրավունքը օգտագործվում է նեղ իմաստով: Այս տեսանկյունից ևս արձանագրվել է, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել նաև կալանավորված անձանց և դատապարտյալների առողջության պահպանման իրավունքի հասկացության ընդլայնման կապակցությամբ՝ ներառելով ոչ միայն ֆիզիկական և հոգեկան խնդիրների առնչությամբ բժշկական օգնությունը և սպասարկումը, այլև հոգեբանական և հոգեթերապևտիկ աջակցություն ստանալու իրավունքը:

Այս համատեքստում հարկ է անդրադառնալ նաև ինքնավնասում կամ ինքնասպանության փորձ կատարած անձանց իրավունքների պաշտպանությանը՝ նրանց հետ վերականգնողական աշխատանքների իրականացման առաջնայնության տեսանկյունից: Մասնավորապես, ներկայումս որպես կալանավորված անձի պարտականություն՝ սեփական առողջությանը կամ կյանքին վտանգ սպառնացող գործողություններ չկատարելը սահմանելը հնարավորություն է տալիս անձին տեղափոխել պատժախուց՝ ինքնավնասում կատարելու համար: Մինչդեռ նման պատժողական մոտեցումը ազատությունից զրկված անձի հոգեկան առողջության պահպանման և նրա հետ վերականգնողական աշխատանքներ կատարելու տեսանկյունից անընդունելի է:

Ազատությունից զրկված անձանց կողմից ինքնավնասումներ կատարելու համար կարգապահական տույժ նշանակելու անթույլատրելիության և անհրաժեշտ բժշկական օգնության իրավունքի ապահովման կարևորությանն անդրադարձել է նաև ԽԿԿ-ն[3]: Մարդու իրավունքների պաշտպանը ևս արձանագրել է, որ ինքնավնասումների կամ ինքնասպանության փորձի համար ազատությունից զրկված անձի նկատմամբ կարգապահական տույժի կիրառումն իրավաչափ չէ, և «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» օրենքի համապատասխան դրույթները ենթակա են փոփոխման՝ մարդու իրավունքների ապահովմանն ուղղված ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններին համահունչ՝ բացառելով սեփական առողջությանը կամ կյանքին վտանգ սպառնացող գործողությունների դեպքում կարգապահական տույժերի կիրառումը[4]:

<u>Դատապարտյալների գնահատումը և դասակարգումը.</u>

Դատապարտյալների գնահատումն ու դասակարգումը առանցքային տարրեր են հանդիսանում այնպիսի միջադեպերի հավանականությունը նվազեցնելու հարցում, ինչպիսիք են դատապարտյալների և անձնակազմի վրա հարձակումները, փախուստները և փախուստների փորձերը, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկի կարգը պահպանելու գործում, ինչը կենսական նշանակություն ունի սոցիալական վերահնտեգրման ջանքերին աջակցելու տեսանկյունից:[5]

Դատապարտյալների գնահատման և դասակարգման արդյունքներն արդյունավետորեն օգտագործվում են անձի հետ կատարվող աշխատանքի անհատականացման, ինչպես նաև այլ անձանց և հիմնարկի անվտանգությունը ապահովելու նպատակով: Ըստ այդմ՝ դրանք պետք է հաշվի առնվեն, ի

---

[3] Տե՛ս ԽԿԿ-ի մասով տե՛ս ՄԻՊ 2019 թվականի տարեկան զեկույցը, հասանելի է՝ https://ombuds.am/images/files/f6bccc6db65258e28be6f3e093987a15.pdf հղումով, էջեր՝ 305-306, (11.02.2022):

[4] Տե՛ս ՄԻՊ 2019 թվականի տարեկան զեկույց, հասանելի է՝ https://ombuds.am/images/files/f6bccc6db65258e28be6f3e093987a15.pdf հղումով, էջեր՝ 307-308, (11.02.2022):

[5] Տե՛ս https://www.unodc.org/documents/dohadeclaration/Prisons/HandBookPrisonerClassification/20-01921_Classification_of_Prisoners_Ebook.pdf (11.02.2022):

թիվս այլնի, նաև անձանց ըստ ուղղիչ հիմնարկների տեղաբաշխման գործընթացքում: Այս համատեքստում հարկ է նշել, որ քրեակատարողական օրենսդրությունը ներկայումս հնարավորություն չի տալիս համակարգային գնահատում իրականացնելուց հետո դրա արդյունքների հիման վրա որոշել դատապարտյալին տեղաբաշխելու հարցը, ուստի՝ անհրաժեշտ է նման հնարավորությունը սահմանելու համար լրացում կատարել ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 100-րդ հոդվածում: Բացի այդ, այսպիսի դասակարգման և գնահատման կառուցակարգի սահմանումը թույլ կտա դատապարտյալին առանձին պահելու վերաբերյալ որոշում կայացնելիս ունենալ ապացուցահեն մոտեցում:

Միևնույն ժամանակ, քրեակատարողական օրենսգրքի առկա կարգավորումների պարագայում՝ դիտավորությամբ կատարված հանցագործության համար ազատազրկման դատապարտված անձին տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար փակ ուղղիչ հիմնարկ ուղարկելու կամ կալանավորվածներին պահելու վայրում թողնելու համար սահմանված է առավելագույնը յոթ տարի ժամկետով ազատազրկման դատապարտված լինելու պահանջ, ինչն արդարացված չէ և գործնականում խոչընդոտում է անձանց նման աշխատանքներում ներգրավմանը: Ուստի, այս կարգավորումը ևս ենթակա է վերանայման՝ հանելով նշված պահանջը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը.

Նախագծերով առաջարկվում է.

1) Հստակեցնել կալանավորված անձանց և դատապարտյալների հոգեբանական և հոգեթերապևտիկ աջակցություն ստանալու իրավունքը, ինչը միտված է նաև առողջության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ նախադրյալներ ստեղծելուն.

2) Վերացնել ինքնավնասման համար պատժախուցը որպես կարգապահական տույժ կիրառելու իրավական հնարավորությունը.

3) Նախատեսել իրավական արգելք անչափահասներին պատժախուց տեղափոխելու վերաբերյալ.

4) Հստակեցնել ազատազրկման դատապարտված անձանց առանձին պահելու կարգավորումները (հիմքեր, ռեժիմներ և այլն).

5) Դատապարտյալների դասակարգման և գնահատման արդյունքները ներառել դատապարտյալներին ըստ ուղղիչ հիմնարկների տեղաբաշխելիս հաշվի առնվող հանգամանքների շրջանակում.

6) Հանել ազատազրկման դատապարտված անձին տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար փակ ուղղիչ հիմնարկ ուղարկելու կամ կալանավորվածներին պահելու վայրում թողնելու համար առավելագույնը յոթ տարի ժամկետով ազատազրկման դատապարտված լինելու պահանջը:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծերի ընդունման արդյունքում ակնկալվում է ստեղծել անհրաժեշտ նախադրյալներ՝ կալանավորված անձի և դատապարտյալի առողջության իրավունքի արդյունավետ իրականացման, ազատությունից զրկված անչափահասների և ինքնավնասում կատարած անձանց իրավունքների արդյունավետ երաշխավորման, ըստ ուղղիչ հիմնարկների դատապարտյալներին տեղաբաշխելու գործընթացի արդյունավետության բարձրացման, դատապարտյալներին տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներ կատարելու համար փակ ուղղիչ հիմնարկ ուղարկելու կամ կալանավորվածներին պահելու վայրում թողնելու հնարավորության ընդլայնման համար, ինչպես նաև ունենալ դատապարտյալներին առանձին պահելու վերաբերյալ հստակ կառուցակարգեր:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագծերը մշակվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից՝ Եվրոպայի խորհրդի կողմից ֆինանսավորվող «Առողջապահության և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդումը Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում» ծրագրի շրջանակներում ներգրավված փորձագետների աջակցությամբ:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ. Հայաստանի վերափոխման ռազմավարություն 2050, Կառավարության 2021-2026 թթ. ծրագիր, ոլորտային և/կամ այլ ռազմավարություններ

Կառավարության 2021-2026 թվականների ծրագրում հստակ նշվել է, որ Կառավարությունը շարունակելու է վճռական մնալ վերականգնողական արդարադատության սկզբունքների արմատավորման հարցում. արդարադատության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է ենթադրեն ազատազրկման ավանդական գաղափարախոսությունից անցում դեպի վերասոցիալականացման և վերականգնողական արդարադատության գաղափարախոսությանը: Այս համատեքստում սույն նախագծերի ընդունմամբ գործնականում կամրագրվի վերասոցիալականացման գաղափարախոսությունը, մասնավորապես՝ ազատությունից զրկված անչափահասների նկատմամբ պատժիչ վերաբերմունքի բացառման, ինքնավնասման կամ ինքնասպանության հակում ունեցող ազատությունից զրկված անձանց իրավունքների պաշտպանության, առանձին պահվող դատապարտյալների հետ վերասոցիալականացման և վերականգնողական աշխատանքների արդյունավետ իրականացման համար նախադրյալների ստեղծման տեսանկյունից: